



ԵՐԵՎԱՆ ԲԱՆԱԿԱՆ

Վ Ա Ր Ա Ն Դ Ա

ՆԻԹԵՐ ԱՊԱԳԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Խմբագրեց Ե. ԼԱԼԱՅԵԱՆ

Մ Ի Ե Ր Կ ՈՒ Խ Օ Ս Ք

ՎԱՐԱՆԴԱՆԻ ՊԵՏՄԱԿԱՆ ԱՆՑԵԱԼԻ ՄԱՍԻՆ.

Վարանդան Նախկին Միւս Հարանդ գաւառն է, որ Քոչուս էլ է կոչուել: Սա ընկնում է Արցախի նահանգի մէջ և նրա հետ միասին մինչև Արշակունեաց անկումը պատկանելիս է եղել Հալերին. աչնունեան ենթարկուել է Աղնուանից պետութեան:

ԺԳ դարում հոներն ու մոնղոլ թաթարները իրենց ասպատակութիւններն ու աւերումները սփռել են այս գաւառում ևս: Նույնաման աւերումներ գործել են ալստեղ և՛ Պարսիկներն ու Օսմանցիները, շարունակ միմեանց ձեռքից խլելով և՛ այս գաւառը:

Վերջապէս 1692 թուին Մելիք Շահնազարի որդի Մելիք Յուսէինը և նրա եղբոր (Մելիք Միրզա-Բէկի) որդի Մելիք Բաղին Գեղամալ լճի եզերքից դաղթում են իրենց ժողովրդի մի մասի հետ այս գաւառը և բնակութիւն հաստատում Աւետարանոց դիւղում:

1721 թուին այս Մելիք Բաղին դուրս է եկել Կովկասեան լեռնաբնակների առաջ և աղատել երկիրը նրանց աւերումներից: Այս և միքանի ալսպլուի բաղթութիւններով Մելիք-Շահնազարեանները տարածել են իրենց իշխանութիւնն ամբողջ Վարանդալի վրայ և որպէս Պարսից աւատական իշխաններ՝ կառավարել երկիրը *):

*) Խամսալի Մելիքութիւններ. Լր. 23-24.

Այս մեղիքներից Մելիք-Շահնազար Բ-ը սպանելով իւր եղբայր Մելիք Յովսէփին, նրա փոխարէն մեղիք է դարձել և այս ու իւր անբարեկամութեան պատճառով՝ ատելի է եղել թէ իւր ժողովրդեան և թէ Խամսալի միւս մեղիքներին, որոնք միջանի լարձակութիւններով աւերել են սրա երկիրը: Ահա այս ժամանակ նա ձեռք է մեկնել ջիւանշիրցիների գլխաւոր՝ Փանահ-խանին, որին և՛ որպէս դաշնակցի գիջել է իւր երկրից, մի բարձր լեռնադաշտ, Փանահ-խանը 1752 թուին շինել է ալդտեղ մի ամուր բերդ և կոչել Փանաբանդ *), բալց լետու, երբ մօտակալ Եօշի գիւղի բնակիչները տեղափոխուել են ալտեղ, բերդը կոչուել է Եօշի կամ Եուշի **):

Փանահ խանը ջլատելով հալ մեղիքների ուժը և շարունակ պատերազմներ մղելով նրանց դէմ, կամաց կամաց կարողացել է նրանց իրեն ստորադրել:

Փանահ-խանի որդի և լաջորդ Իբրահիմ խանի ժամանակ Պարսից զօրապետ Աղա-Մամադ-խանը 1795 թ. գարնանը եկել պաշարել է Եուշին: Մելիք-Շահնազարեան Մելիք Ջոււշուղը և Մելիք Բէկլարեան Մելիք Աբուլը հալ զօրքերով ամրացել են Եուշի բերդի մէջ և Իբրահիմ խանի հետ միասին պաշտպանել բերդը: Քառասուն օր ապարդիւն պաշարումից լետու Աղա-Մամադ-խանը վերցրել է պաշարումը և զնացել տիրելու Թիֆլիսին: Այս Աղա-Մամադ-խանը 1797 թ. կրկին անգամ արշաւել է Եուշու վրայ և առել բերդը, սակաւն ալս անգամ ինքը շահը, սպանուել է իւր սենեկապետի ձեռքով և Պարսից զօրքերը լետ են քաշուել իրենց երկիրը:

Երբ ռուսները իշխան Յիցիանովի առաջնորդութեամբ գրաւել են Գանձակի բերդը, Իբրահիմ խանը Մելիք Ջոււշուղի խորհրդով առանց պատերազմի՝ բնդուեն է ռուսաց հպատակութիւնը (1805): Բալց լետու (1806) դաւաճանել է ռուսներին և հրաւիրել պարսիկներին Եուշին տիրելու: Եւ երբ ինքը շտապել է գիշերով զընալ միանալու Եօշի գիւղի մօտ բանակած պարսից արքայորդի Աբաս Միրզին, Մելիք Ջոււշուղն ու փոխ զնդապետ Լիտանեվիչը բռնել են նրան և սպանել: Այս պատերազմը ահագին վնասներ տալով տեղ է մինչև 1813 թուականը, երբ Գիւլիստանի դաշնադրութեամբ Ղարաբաղը լանձնուել է ռուսներին:

Սակաւն 1826 թ. Աբաս Միրզան իւր մօտ փախած Իբրահիմ խանի որդի Մեհտի խանի գրգռմամբ և Ղարաբաղը կրկին վերադարձնելու լուտով 80,000 զօրքով նորից արշաւել է վարանդա, և

*) M-me Chantre A travers de l'Arménie.

**) Խամս. Մել. Եր. 63-

պաշարել Շուշին, Ռուսները Աւետարանոց գիւղացի Մատաթեան զօրապետի առաջնորդութեամբ մեծ ջարդ են տուել Պարսից՝ Դան-ձակի մօտ և հալածել մինչև իրենց երկիրը:

Ալեքոնտե Շուշին կառավարուել է ռուսներին ճանաչուած զաւառապետներով:

Ա Մ Ա Ր Ա Ս

Սա հին ժամանակներում մի գիւղ է եղել, ուր Ս. Գրիգոր Լուսաւորիչը հիմնարկել, իսկ իւր թոռ Գրիգորիսը աւարտել և օծել է մի եկեղեցի, երբ Մասթթաց Սանեսան թագաւորը 348 թ. Ս. Գրիգորիսին, որ Աղուանից և Վրաց կաթողիկոս էր, ձիու պոչից կապելով Վատնեան դաշտում նահատակել է տուել, նրա աշակերտները հաւաքել են տուել նրա նշխարները և բերել ամփոփել ալս և կեղեցում: Ալեքոնտե ալջ գիւղը դարձել է նախ եպիսկոպոսանիստ և ապա Աղուանից կաթողիկոսների աթոռանիստ *):

Ն. դարում Աղուանից թագաւոր Վաչագան Գ. պարել և գըտել է ալստեղ Ս. Գրիգորիսի մաստէքները և նորից ամփոփելով վերանորոգել տաճարը:

Մօտ 1293 թուին Թաթարաց Բատուն խանը կողոպտել է ալս վանքը և տարել ս. Գրիգորիսի գաւազանն ու մի ոսկեձող 36 ակներով զարդարուած խաչ: Յունաց կապեր Դեսպինա զուտորը խընդրել է ալջ խաչն ու գաւազանը և ուղարկել Կ. Պօլիս **):

1387 թուին Ամարասն էլ, Արցախի և ուրիշ նահանգների հետ ենթարկուել է Լանդ-Քամուրի աւերումներին:

Ժողովուրդը ալժմա էլ պատմում է, թէ Լանկ-Քամուրը իւր զօրքերը շարել է Ամարասից մինչև Արաքսը և հրամայել Ամարասի վանքի քարերը միմեանց տալով թափել Արաքսը ***):

Մելիք Շահնազար Բ. վերանորոգել և պարսպել է վանքը, ինչպէս և բազմաթիւ սենեակներ շինել ուխտաւորների համար:

Ժլ. դարում ալստեղի միաբանների համար որպէս ամարանոց շինուել է Հրիշեր գլիւղում մի գեղեցիկ եկեղեցի և միաբանութեան համար խցեր:

Կարծւում է, թէ Ամարասի միաբանութեան ամարանոց եղել է և՛ Վերին Թաղավարդից դէպի հարաւ-արեւմուտք 1 1/3 վերստ հեռաւորութեամբ գտնուող գեանի մէջ թաղուած եկեղեցին, որ ալժմ Բա-

*) Ռնճիճ. Ստոր. եր. 307.

**) Ստեփ. Օրբ. գլ. 4.

***) Բարախ. Ուխտ. լիշ. եր. 9.

րևածառ անունով ուխտաառի է։ Եկեղեցում գտնուած են հետեւեալ արձանագրութիւնները.

«Սուրբ Պետրոս. կանգնեցի զխաչս 'ի փրկութիւն հոգւոյ իմոյ եւ ծնողաց իմոց։ Արդ, որք երկրպագանէք սուրբ Նշանիս զիս աղօթքս... ջիք եւ Աստուած զձեզ լիշեսցէ. Թուին Ն. Խ. Զ. էր։

«Սուրբ Պօղոս։ Յամս Աստուածապատիւ եւ հոգևոր Տեառն Յովհաննիսի Ամարասայ եպիսկոպոսի եւ պետութեան տեառն Գազիկալ Աղտանից իշխանաց իշխանի եւ հալր Կիրակոս առաջնորդ սուրբ ուխտիս եղբօր որդի Կոկոնայ...

Թուականը մինեոյնն է *). 'ի զէպ, ասենք, որ ալս Բարևածառի մասին կալ հետեւալ աւանդութիւնը. Մի ժամանակ ալստեղ ապրում էր մի սուրբ եպիսկոպոս, եւ ամեն անգամ երբ Նա երկար ծոմապահութիւնից ու ճգնութիւնից լետով պատարադ էր մատուցանում, շրջակայքի ծառերը ողջոյնի ժամանակ երեք անգամ խոնարհեցնում էին իրենց գագաթները եւ միմեանց կպցնելով ողջոյն տալիս։ Մի օր էլ մի հեռաւոր հալ մի ջորի ոսկով բարձում եւ գալիս է ալս հրաշքը տեսնելու Նա խոստանում է եպիսկոպոսին՝ նուիրել վանքին իւր հետ բերած ոսկին, եթէ արժանանալ տեսնելու հրաշքը։ Եպիսկոպոսը խոստանում է, բալց պատարադի ժամանակ սկսում է երկմտել, թէ արդեօք ոսկու հետ ջորին էլ պիտի նուիրէ թէ ոչ։ Ալս երկմտութիւնը ալն հետեւանքն է ունենում, որ ողջոյնի ժամանակ ծառերը չեն համբուրում։ Եպիսկոպոսը բացատրում է պատճառը եւ ջերմեւանդ ուխտաւորը խոստանում է ոչ միայն ջորին, ալ եւ ուրիշ շատ թանգագին ընծաներ ուղարկել։ Եպիսկոպոսը նորից պատարադ է մատուցանում եւ ալս անգամ կատարում է հրաշքը։ Հարուստ հալը զոհութեամբ վերագառնում է իւր երկիրը եւ ուղարկում խոստացած նուէրները **).

Բալց դառնանք Ամարասին. դարուս սկզբում ալս վանքը անտէր մնալով թուրքերի ձեռքն է ընկել, որին Աղ-Օղլան անունը տալով՝ իրենց սրբավայր էին դարձրել։ Բազմաթիւ սենեակներն էլ ռուսները գործ էին ածում որպէս մաքսատուն։ Բաղդասար մետրապօլիտի աշխատութեամբ 1848 թուին մաքսատունը տեղափոխուել է Սրասիսի ափի մօտ, իսկ վանքն իւր կալուածներով վերագարձուել է Հալոց հոգևոր իշխանութեան։

Վերջապէս 1858 թուին գլխաւորապէս շուշեցիների օժանդակութեամբ հիմնովին շինուել է վանքը։

*.) Բարախ, Ուխտ, լիշ. եր 5.

**.) Բարախ, Ուխտ, լիշ. եր 10.